Նոյեմբերի 8-ին, երեկոյեան մօտ 5 ժամին, Վագզալի կայարանից 3 վերստ հեռաւորութեամբ «Սամգօրի» անուանված տեղում, Սդոսախի խճուղու մօտ, հինգ անյայտ թուրքեր, որոնցից չորսը զինուորված էին բերդանկանելով, յարձակվեցին Սդոսախի գաւառի Կանդաուլի գիւղի ընակիչ Բաստաշվիլիի վրա և խլեցին նրանից 42 բուլի փող, մուշտակ և ուրիշ իրեր, ընդամենը 170 ր. զուտաբերի: Մի ժամից յետոյ նոյն չարագործները յարձակվեցին Պառարձէուլի գիւղի մի քանի գիւղացիների վրա, որոնք գնում էին սայլերով, և վիրաւորեցին հրացանի փղակով այդ գիւղացիներից մէկին, ու փախան: Դրանց սկսեցին հետամուտ լինել, բայց մինչեանց պատճառով, փախան:

—

Մեզ հաղորդում են, որ այսօրվանից զորձարաններ են անելու Թիֆլիսի բոլոր ֆուրգոնչիները, դրօշկիները, տաքսիչները և փոխադրութեան միւս միջոցները գործ ածող աշխատաւորները: Նրանք գրել են քաղաքային Ուղղաւորային և ոստիկանութիւնը որոշ պահանջներ:

—

Մեզ խնդրում են մամուլի միջոցով հետևեալ տարեցը տալ Թիֆլիսի խաղարարտ ոստիկանութեանը. 1) ճշմարիտ է արդեօք, որ այս երկու օրը Թիֆլիսի „Переселенческій Пунктъ"-ում ստացվել են երկու խոշոր արկղներ: 2) ճշմարիտ է արդեօք, որ այդ երկու խոշոր արկղները մանրացնելու համար հրաւիրել են մի տաղտկարար և 3) ճշմարիտ է, որ այդ արկղներից մէկը շուտով ուղարկելու են Շէյթան-Բազար բաժանելու մի քանի յայտնի թուրք խուլիգաններին, իսկ միւս արկղը բաժանելու է ռուս խուլիգաններին:

—

Լոնդոնից հեռագրում են „Новости" լրագրին. «Վերջին ուսարձութիւններից վնասված ռուսական հրեաների օգտին բարձր Բոտշիլդը հանգանակել է 193,000 ֆունտ—սաերլինգ, այսինքն՝ մօտ 1,900,000 բուբլի, որոնցից 120,000 ֆունտը հանգանակված է Ամերիկայում»:

—

Լուրերին նայելով, ասում է „Новости" լրագիրը, կոմս Վիտտէին, երկար ու եռանդուն ջանքերից յետոյ վերջապէս աջողվել է անել մի փոքրիկ փոխառութիւն դրամատէր Մէնդելսոնից, կարճ ժամանակով, ասելի վատ պայմաններով կառավարական զանձարանի համար՝ քան կնքված նախկին երկու փոքրիկ փոխառութիւնները:

—

Նոյեմբերի 5-ին, երեկոյեան մօտ 5 ժամին, Տիրզամանի գիւղում, փայտերով զինուորված 20 հոգի գիւղացիներ, որոնց թւում գտնվում էին և մանիֆեստի շնորհիւ բանից նոր արձակված անձինք, յարձակվեցին նիժէգօրոդեան դրագունների գնդի մի քանի զինուորների վրա՝ նրանց զէնքը խլելու նպատակով, վայր դցեցին զինուորներից մէկին և խլեցին մինչ ոկին: Այդ ժամանակ օգնութեան հասան միւս զինուորները և հրացանաձգութիւն սկսեցին գիւղացիների վրա: Գիւղացիներից սպանվեցին երկու մարդ:

—

Նոյեմբերի 5-ին, երեկոյեան Թիֆլիսի, գաւառի Ախմէյլի գիւղի ընակիչները, զէտոն լինելով տեղական վաճառականներից կենսական պիտոյքները չը տեսնված գներով ծախելու համար, մեծ խումբ կազմելով, Բազարնայա փողոցի վրա տեսան փակել խանութները և զինեանները և ջարդ ու փչրոտ արին մի քանի խանութների կղմինդրեայ ծածկոցները: Հետևեալ օրը ամբոխն անցաւ փողոցով կարմիր գրօշակներով և երգեցողութեամբ: Խանութները փակված էին մինչև նոյեմբերի 7-ը: Ամսի 7-ին բոլոր խանութները բացվեցին ուրբաթիների և արաժնիների աջակցութեամբ:

—

Այս տարի, համեմատելով միւս տարիների հետ, թէ մթերքների և թէ ուրիշ մի քանի այլ առօրեայ կեանքի համար անհրաժեշտ առարկաների գները զգալի կերպով բարձրացել են. այսպէս, օրինակ, տարվայ այս միամանակ սոխի պուդը 30—35 կ. բարձր չէ եղել, իսկ այժմ 70 կ. պակաս չէ կարելի գնել, գետնախնձորը արժէ 70 կ. պուդը, կաղամբը 40—45 կ. պուդը, ձուի 100-ը 1—70 կ., շաքարը 8 ր. 40 կ. պուդը, ածուխի մոմը 29 կ. ֆունտը, ձկներեղենից՝ զուտիին 24 կ. ֆ., իշխանը 30 կ. ֆ., գեղարքունին 20—25 կ. ֆ., խաւիարը 1 ր. 80 կ., կրուպկէնը՝ 15% աւելի է անցեալ տարվանից, նաֆթի պուդը 1 ր. 60 կ., սաժենով վաճառվող փայտը 5 ր. աւելի է անցեալ տարվայ նոյնամեմատելով: Աւելացրել են և սայլով վաճառողները. ածուխի պուդը 50 կ., տաւարի միսը 10 կ. ֆունտը, ոչխարինը 12 կ., խոզինը 15 կօպ. (այս տարի խոզ շատ քիչ կայ), իւղը 40—45 կ. ֆ., պանիրը՝ սարի լաւ տեսակը 8 ր.—9 ր. պուդը, օսի պանիրը 7 ր. պուդը: Մանուֆակտուրային ապրանքների վրա գործարանատէրերը այս տարի 10—20% աւելացրին, որպէս հետևանք Ռուսաստանի բանուորական շարժման և պատերազմի կազմի խանգարված վիճակի.

—

Ի Թիւս զանազան միտինգների փայտ կըտրողներն էլ (ատցոց) նոյեմբերի 15-ից իրանց միտինգն են սարքել և որոշել են՝ աշխատանքի վարձը աւելացնել՝ այն է ամեն մէկ բուբլուն—15 կ.: Այսպէս օրինակ, մի այլ փայտ անողը, եթէ սայլին վճարել է 5 ր.՝ ստացելու համար պիտի վճարէ ոչ պակաս քան 5×15=75 կ., ամեն բանի մէջ թող սպառողի ջանը կարծիքը փոքր ինչ կրաւորական է արտաքին քաղաքականութեան հարցերի մէջ: Գերմանական կայսրութիւնը դեռ այնքան երիտասարդ է, այնքան շատ ունի ներքին կարգաւորման հարցեր, որ չէ կարող գործ ունենալ օտարների կարիքների հետ. գերմանացիները դեռ իրանց ատ կատրների շինութիւնը չեն վերջացրել: Ուստի, որքան ուժեղ է գերմանական հասարակական կարծիքի ազդեցութիւնը ներքին հարցերի վրա, այնքան էլ նա թոյլ է արտաքին հարցերի մէջ, որոնց համարեա թէ իր մենաշնորհն է դարձրել Վիլհելմ II կայսրը և կարգադրում է իր կամքով: Նոյն Ֆրանսիս Գրեհանանէն, որ այնքան սրամիտ կերպով բընորոշել է «թէյի փող տուող» թիւրքական քաղաքականութիւնը, մի միտինգում շատ արդարացի նկատեց թէ Վիլհելմը, «այդ արքայական Լօէնգրինը, կարապի թափառուն ասպետը», սուլթան Աբդուլ-Համիդի վճռական ցանցի մէջ ընկաւ և իրրև այդպիսին՝ առաջինն է եւրոպական թագաւորներից: Եւ իսկապէս, Վիլհելմ II, իրրև համագրմանական ազգութեան և տեսակետական Kulturkamphf-ի առաջնորդ, կարողացաւ նուաճել անիծեալ Թիւրքիան գերմանական կապիտալի համար, ազնուական սարկացրեց Փոքր-Ասիան և իր յաղթութեան նշան դրեց Կ. Պոլսում շատ փառաւոր մի շատրուան հին բիւզանդական Հիպոդրոմում: Սակայն այդ յաղթութիւնը յիշեցնում է օրորդական ասացուածքը.

—Աղջ եմ բանել:

—Բեր ապտեղ:

—Չէ թողնում:

Զը ժամանակով այս նրէական օգուտների ըմբռնիլը, որ ձեռք է բերել գերմանական կապիտալը Փոքր-Ասիան անտեսապէս նուաճելու միջոցով, չէ կարելի պարզ չը տեսնել, որ Գերմանիան ինքն էլ չը նկատեց թէ ինչպէս այս ոսպի ապուրի գնով ծախեց իր բարոյական ազդեցութիւնը թիւրքական քաղաքականութեան մէջ, իսկ Վիլհելմ կայսրը, սարկացնելով, ինքն էլ սարկացաւ իր «բարեկամ» Աբդուլ-Համիդի հետ համերաշխ լինելու անհրաժշտութեան: Ոչինչ կասած չը կայ, որ Վիլհելմ II, ինչպէս կրթված թագաւոր է, քրիստոնէական դատարարութիւն սացած, չէ կարող չը վրդովվել թիւրքական ըէժիմի սարսափներից Հայաստանում և Մակեդոնիայում: Մի քանի մարդիկ իրանց յիշողութիւնների մէջ անհամեստութիւն են ուներցել հրատարակել ամենաչար և յանախ սրամիտ հեգնանքների և կարուկ ասացուածքների մի ամբողջ շարք, որ գերմանական կայսրը մատրմական շրջանակներում ասել է Սամսբուլի իր բարեկամի հասցէին: Բայց «արքայական Լօէնգրինը» Թիւրքիայում չավարանց շատ է սպանել միլիօնաներ թէ իր սեփական, թէ պետական և թէ մասնաւոր գերմանական: Նա ընկել է չափազանց կոյր մի պատասխրող դերձեան մէջ, որ դրել է իր կապիտալը ոչ այնքան շատ յաւատի ձեռքերի մէջ, և այդ բոկի պատճառով ամեն օր զոյում է իր պարապանի ամեն մի ընտանեկան անախորժութիւնից, ամեն մի ՀԵՐՄ-յանկարծ նա մնանկանայ, յանկարծ խնամակալութիւն հաստատեն նրա վրա, յանկարծ մեռնի: Վիլհելմ II յաղթված մի յաղթող է: Աբդուլ-Համիդը իրան յատուկ խորամանկ հանճարով, կայսրին տուել է յաղթութեան ամբողջ արտաքինը, իսկ ինքը վերցրել է էութիւնը, ինչպէս հեբրայի մէջ ասում է բաժանվող բոլոր մասին. «տերևները քեզ, արմատը՝ ինձ»: Յանձին կայսր Վիլհելմի նա ձեռք է բերել մի հաւատարիմ պահապան, որ անձամբ շահագրգռված է, որ պահպանված լինի թիւրքական գործող ըէժիմը, որովհետև ամեն մի յեղափոխութիւն, զինուորական փոփոխութիւն կամ մրցող մի պետութեան ազդեցութեան գերակշռութիւն կը խորտակեն գերմանական կապիտալը:

Եւ ահա մենք տեսնում ենք, որ Արևելքի քրիստոնեայ ազգութիւնների հարցի մէջ Վիլհելմ բաժանվում է սպիտակ խօսքի և մոխրագոյն, նոյն իսկ սևագոյն գոյնի. 1902 թէին հայերը մուտք գործեցին Վիլհելմի մօտ մի պրոֆեսորի միջոցով, որ նրա անձնական բարեկամն էր համարվում: Պառասխանը ամենասիրալիրն էր և համակրական՝ սկզբունքով, բայց—«դեռ չէ հասել ժամանակը դնելու հայոց հարցը գերմանական հողի վրա»: Գերմանական դեսպան դայ, լինի նա ունեցը կամ չունեցը: Բացի սրոցոդներից մի-ացել և մի խօսք են կապել քաղաքիս այդեսպանները, որոնք թուով 300-ի չափ են: Սրանց պահանջները աւելի սաժան լինելով՝ այդեսէրերին դժուար դրութեան մէջն են դրել: Այս օրերս այդեսէրերը ժողով են սարքելու՝ այդեսպանների բոյիսի դէմ գեղ ու գարման գտնելու. ընդհանուրի տրամադրութիւնն է՝ բոլորին արձակել և փոխանակել իրանց ձեռնտու այդեսպաններով:

—

Այսօր, նոյեմբերի 18-ին, երեկոյեան ժամի 5-ին, «Իվերիայի» խմբագրատանը նշանակված է ժողով լրագրների կանտորշիկների, էկսպեդիտորների, ցրիչների և ծառայողների, իրանց դրութեան և կարիքների մասին խորհրդակցելու համար: Նոյեմբերի 16-ին նշանակված ժողովը չը կայացաւ, որովհետև ծառայողների մեծամասնութեանը յայտնի չէր ժողովի նշանակման մասին:

—

Վաղը, ամսի 18-ին առաւօտեան ժամը 10-ին Վերայում կայանալու է միտինգ Գոստհեռագրատան ծառայողների:

—

Մեզ հաղորդում են, որ Մանչուրիան երկաթուղու վրա գտնվող հայ զինուորների, ծառայողների և առևտուրը անողների խնդիրքով այնտեղ է ուղարկվում Ընդակ վարդապետը հոգևոր հովուի պաշտօնով:

—

Նոյեմբերի 12-ին Աւճալեան փողոցի վրա գտնվող առաջնորդարանում լսեցը միտինգ սարքեցին: Միտինգում այն՝ կարծիքը յայտնեցին, որ հարկաւոր է հիմնել Թիֆլիսում լեհական քաղաքական կլուբ: Ասվեց ի հարկէ Լեհաստանի այժմեան դրութեան մասին: Հեռաւորներից մէկը առաջարկեց ժողովին հեռաձայնել, որպէս զի Լեհաստանում սկսված շարժումը իր նպատակին հասնի, հարկաւոր էր որ միտինգը իր ձայնը միացնէ հասցէն Ռուսաստանի պրոգրէսիւ տարրերի ձայնին և ներկայացնէ ընդհանուր պահանջներ, այն է վերացնել ուժեղացած պահպանութիւնը և զինուորական դրութիւնը Ռուսաստանի ամեն տեղերում և հրաւիրել սահմանադիր ժողով: Միտինգն ընդունեց այդ առաջարկութիւնը:

—

Ներքին գործերի մինիստրութեան կառավարիչ Դուրնովօ և պօստ-հեռագրական գլխաւոր վարչութեան կառավարիչ Սեվաստեանով շրջաբերականներով յայտնեցին պօստ-հեռագրական շրջանների դիւաւորներին, թէ քանի որ հնարաւոր է պօստ-հեռագրական պաշտօնեաների գործադուլը, որը շատ և շատ անհանգստութիւններ կարող է ունենալ, կարգադրութիւն արէք, որ եթէ, յիրաւի, գործադուլ տեղի ունենայ, հրաւիրել գործադուլ արած պաշտօնեաների տեղ պօստ-հեռագրական պաշտօնատեղ եղած նախկին ծառայողներին:

—

Պօստ-հեռագրական ծառայողների գործադուլի պատճառով, հրաւիրվեցին նրանց գործը կատարելու համար կովկասեան սպասաւորների առաջին բատալիօնի զինուորները, որոնք շատ դժուարանում են հեռագիրներ տալը: Երևայց, որ զինուորները մի ադպիսի լուրջ գործ չեն կարողանում կատարել: Ուստաօնի սիստեմի ապարատի վրա ամենեին չեն կարողանում աշխատել:

—

Նոյեմբերի 22-ին Թիֆլիսի քաղաքային դումայում կը քննվեն հետևեալ հարցերը. 1, Ուղղավայի զեկուցումը քաղաքային զանձարանի դրութեան մասին. 2, Ուղղավայի զեկուցումը, աւանդների պահանջներին բաւարարութիւն տալու մասին. 3, Ուղղավայի որոշումը պահասան կօտինին նպաստ տալու համար. 4, Ֆունտիրուլիորի վարչութեան յայտարարութիւնը իրան կենդեսիայի իրաւունք տալու էլեքտրաքարշ անցկացնելու մասին ֆունիկուլիորի ներքին կայարանը. 5, Ուղղավայի զեկուցումը տանելէ Բէկ-Մարմարինի ինդրի վերաբերմամբ, գեսահատական տուրքից մեացորդ տպաղիր իրանց չբռնատալու համար. 6, Քաղաքագլուխ Վերմիշեանի պաշտօնը թողնելու մասին. 7, Զատաւոր Բարաթովի յայտարարութիւնը I գիմնազիայում զօրք բնակեցնելու մասին, և 8, Քաղաքագլխի պաշտօնակատար Զէրբիզօվի առաջարկը—գեկուցում ներկայացնել Փոխարքային ներկայումս քաղաքում տիրող կեանքի դրութեան մասին:

—

Պետերբուրգում, նոյեմբերի 8-ին ինժենիերների ժողովում ինժենիեր Ա. Ա. Բաբլիկովը կարդացել է մի մեծ զեստիսսուրիա Ռուսաստանի ներկայ ատեսական դրութեան և երկաթուղային գործի մասին: Դասախօսը մութ և մռայլ գոյներով է նկարագրում մեր կայարութեան մօտ ապագան: Հեռաւոր Արևելքից շուտով վերադառնալու են բազմաթիւ զինուորներ և պատերազմի ժամանակ այն կողմերում աշխատանք գտած բանուորներ: Շուտով, կը նշանակէ, Ռուսաստանի հրապարակն են լցվելու մի միլիօնանի աշխատող բանուորներ, այն ինչ արդէն ներկայումս աշխատաւոր ձեռքերի առաջարկը աւելի է պահանջից: Միւս կողմից էլ պետութեան մէջ սկսում է դրամի, կապիտալների սակաւութիւն: Օտար դրամատէրերն էլ արդէն սկսել են կասկածով նայել ռուսական ֆինանսների և մօտաւոր ապագայի վրա: Դրամ չը կայ, ուրեմն նոր ձեռնարկութիւններ անկարելի է անել: Իսկ աշխատաւոր ձեռքերն սառում են: Այդ բոլորը շատով տեղի կը տան մի հակասական երևոյթի: Դասախօսի կարծիքով, միակ ելքը կարող է լինել նոր երկաթուղիներ կառուցանելը, իսկ դրա համար պետութիւնը միջոցներ չունի: պէտք է դիմել մասնաւոր ձեռնարկութեան:

—

Նոյեմբերի 15-ին Թիֆլիսի ատուականութեան ժողովի անդամները, նամանգի ատուականութեան պարապուլիս իշխան Զամբակուրեան-Օրբելիանի նախագահութեամբ, ժողով կոչացրին քննելու համար այն մի խումբ վրացիների յայտարարութիւնը, որոնք կամենում են, որ վրաց ատուականների թարգմանը վերաշինվի վրաց քաղաքական կլուբի համար: Ժողովը հաւանութիւն տուեց այդ կարծիքին և որոշեց, մի մասնաման զեկուցում ներկայացնել ելով ատուականութեան այդ տիպով նոյեմբերի 18-ին արտակարգ կերպով հրաւիրվող ժողովին:

—

Նոյեմբերի 20-ին Թիֆլիսի փաստաբանները ժողով են անելու, պրոֆեսիոնալ-քաղաքական դաշնակցութիւն հիմնելու համար:

—

«Ցնօբիս-Փուրչէլի» լրագրում կարդում ենք, որ չորս վրացի եպիսկոպոսներ անցեալ օրը Վրաստանի էկզարխի մօտ էին և խօսակցութիւն ունէին Վրաստանի եկեղեցու ատոկէֆալ լինելու մասին: Եկեղեցին, ի միջի այլոց, հարցրել է, թէ ինչպէս պէտք է կարգադրվի պատերազմների, յոյների և ուրիշների գործը, ում պէտք է նրանք հպատակվեն կաթոլիկու նշանակելուց յետոյ: Եպիսկոպոսները պատասխանել են, թող իւրաքանչիւրը իր եպիսկոպոսն ունենայ: Իսկ էրը արքունական ռոճիկ այլ ևս չը լինի: Եպիսկոպոսները դրան պատասխանել են, թէ ինչպէս ռուս քահանաների հետ կը վարվեն, այնպէս էլ վրաց քահանաների հետ վարվեն: Եթէ նրանց ռոճիկ պէտք է տրվի, այն ժամանակ վրաց քահանաներին էլ պէտք է ռոճիկ տալ:

—

Անցեալ հոկտեմբեր ամսին Թիֆլիսի քաղաքային առաջին ատատարանում գիշերել են 1769 հոգի, որոնցից 1760 հոգի տղամարդ են, իսկ 3 հոգի կանայք: Վերոյիշեալ թւից ռուսներ են՝ 735 տղամարդ և 3 կին, հայեր՝ 598 տղ., վրացիներ՝ 287 տղ., լեհեր՝ 81 տղ., և այլ ազգեր՝ 9 տղամարդ: Ատատարանում գիշերել են նաև 2 աշակերտ:

ՈՍՏԻԿԱՆՈՒԹԵԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

Հոկտեմբերի 14-ին Քութայիսի նամանգի գեղջուկի Ագասիա Թօգնիձէ 7-ը քաղաքամասի ոստիկանատան տարած իր մեռած երեխային, պատրաստ պարզելի կենսագրութեան, և յայտնեց, որ երեկ օր առաջ ինքը ծծէր մօտ թողել երեխային և երբ դեռ գաղաս, դառ նրան կատարելապէս հիանալ, պատկեր ընելու. նրա հետ ուրիշ ոչինչ տեսան, որ նա մեռած է: Պատասխանը տեսնող բժշկի խօսքով երեխան մեռել է քունի մահով:

—

Նոյեմբերի 14-ին Թիֆլիսի բնակիչ Իլիա Մէլքսաբիշվիլին, Նավթլուղում, քաղաքային ոստիկանության մօտ, ըէվոլվերի երկու հարուածով վիրաւորեց Թիֆլիսի բընակիչ մասնագէտ Սիմոն Աւետիսեան Դէմուրովին և ինքն էլ փախաւ: Մի գնդակը դիպաւ դլխին, իսկ միւսը պատաւոր թողնը 1904 թէի Սասունի կոտորածների դէմ մեր ունեցած ծիծաղելի ընդդիմութեան մասին:

—

Նոյեմբերի 15-ին երեկոյեան 6-ը մի ժամի սկզբին, 10-ը քաղաքամասի շրջանում, Մարիէլսկայա և Աւճալեան փողոցների անկիւնում, երկու անյայտ տեղացիներ ըէվոլվերի մի քանի հարուածներով վիրաւորեցին Բաթումի քաղաքային ոստիկանատան դեսատատար Զատիմիր Շեմիկինին, երբեք յետոյ չարագործները փախան Մարէլիսկայա ջուրացող դէպի երկաթուղու գիծը և անհետացան:

—

Քաղաքային բաժարանի բաղում, 5-ը քաղաքամասի շրջանում, պատաքնում գտնվեց իլիան տեսք մի նորածին դիակ, առանց բոնի մասնի նշանների: Դիակն ուղարկվեց Թիֆլիսի Մէթեյէլեան հիւանդանոցին կից Անատոմիական թատրոնը:

—

Նոյեմբերի լուս 15-ի գիշերը, 9-ը քաղաքամասի շրջանում, իշխանուհի Անատասիա Եվսէեվնա Զէլոխաեվի բնակարանից, որ գտնվում է Նիկոլաեվսկայա և Գիլդենօվսկայա փողոցների անկիւնում, պատշգամբի վրա գտնվող մեղուների կոտրելով, գողացել են 800 ր. զումարի զանազան ոսկեմակերեսիկներ: Կասկած է յայտնված Գօլու գաւառի Տիֆլիսվլ գեղի ընակիչ Սաֆլենո Կուլդաշանովի վրա, որը գողութիւնը կատարելուց յետոյ փախել է:

—

6-ը քաղաքամասի շրջանում, Սուլթանօվսկայա փողոցի վրա, գիներների և կանանոցների միջև ընկավեց և այդ կուի մէջ Թիֆլիսի քաղաքացի Օհանէս Զուրաբօվի ձախ աչք կորցրեց, իսկ Մէնդելեան գրեչատէրերի գնդի զինուոր Իլիան Շեվլիով գանալով վիրաւորեց փոքրիկ Սդոսախի գաւառի Կուրջանի գիւղի ընակիչ Գէորգի Ուսաքաշվիլիին: Վիրաւորները ուղարկվեցին Մէթեյէլեան հիւանդանոցը, իսկ յանցաւորը բռնվեց:

—

Նոյեմբերի 15-ին 4-ը քաղաքամասի ոստիկանութիւն եկաւ Քութայիսի նամանգի Բաձա գաւառի ընակիչ Գէորգի Սիրաձէ, որ ընակվում է Գաճօվսկայա փողոցի վրա, Թօրոսովի տանը և խոնարհաբար պատմեց ունի իշխան Բէգիթաբէգովի մօտ և յայտնեց, որ նոյեմբերի 12-ին իշխանի մօտ ապրելիս վարձվեց իրան անծանօթ մի կին, որ իրան Ալէքսանդրա Բէգիեա էր անանուն և երբ մի ժամ միայուց յետոյ գնաց, ասելով, որ գնում է բերելու անցագիրը և այլ ևս չը վերադարձաւ: Նոյեմբերի 13-ին ինքն, Սիրաձէ, սուսգերով էր իրերը, տեսաւ, որ զողացել են իրանից 72 բուբլի փող, որ գտնվում էր չը փակված չէմոդանումն: Նա կասկած յայտնեց հէնց այդ Բէգիեայի վրա, օրը նրա բացակայութեան ժամանակ մտել էր նրա սենեակը:

—

Նոյեմբերի 16-ին, երեկոյեան մօտ 7 ժամին, Նաֆթի բազաքի ընակիչ Նարգա Մոսաաէ-օղլին, մանկով զբաղակ Բարսէլի Կարապետանցի արհեստանոցը, և տարա Ուզունյա փողոցով եկաւ Օթարօվի գիներանոցը, երբ անցաւ երկրորդից և ուսանարդ ուզում էր յանցանք գործել, բայց բռնվեց և ուղարկվեց ոստիկանատուն:

—

Դիմրցօվսկայա փողոցի վրա ասիական արծաթէ իրերի մագազին ունեցող Մօլօսոն Բէկուչէվ յայտնեց ոստիկանութեան, որ նոյեմբերի լոյս 16-ի գիշերը, կեղծ բանալիով, անյայտ չարագործները գողացել են իր մագազինից արծաթէ զանազան իրեր, թէ որքան գումարի, առ այժմ որոշել դժուար է: Քննութիւնը կատարվում է:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

—

ԻՆՉ Է ԿՍԱՏԱՐՎՈՒՄ ԱՇԽԱՐՀՈՒՄ

Անգլիա: Անգլիական լրագրները և հասարակական կարծիքը վերջերս սաստիկ զբաղված են անգլօ-ռուսական մերձեցման և դաշնակցութեան հարցի քննադատութեամբ:

«Օբսերվեր» լրագիրը գլուխ է, որ Անգլիան մեծ հաճութեամբ կողջունէ անգլօ-ռուսական մերձեցման լուրը, թէև նրա պատիւը պարտաւորացնում է նրան, որ նա թոյլ չը տայ այն պետութիւնների երկիրը բաժանելու գաղափարը, որոնց հետ Անգլիան խաղաղ յարաբերութիւններ ունի:

Այս դիտողութեան միտքը հասկանալու համար պէտք է ասենք, որ անգլօ-ռուսական մերձեցումը, ինչպէս ենթադրում են, կարող է կայանալ այն հողի վրա, որ որոշվի Խրաքանչիւր պետութեան ազդեցութեան շրջանը թէ մօտաւոր և թէ հեռաւոր Արևելքում: Որովհետև հեռաւոր Արևելքի բախտը արդէն որոշված է անգլօ-հարաւնական և ռուս-եաղոնական դաշնագրերով, որովհետև Եաղոնիան արդէն ինքն մի հզօր պետութիւն է, որի ձեռքումն է գտնվում այժմ իրրաղպէս հեռաւոր Արևելքի բախտը, ուստի մերձեցումը և համաձայնութիւնը Անգլիայի և Ռուսաստանի մէջ կարող է կայանալ իսկապէս Աւղանիստանի, Պարսկաստանի և Թիւրքիայի վերաբերմամբ: Մանաւանդ կարևոր է Պարսկաստանի խնդիրը: Անգլիան անտարբեր չէ կարող Աւրգայլեան զուարթ յայտարարից մի բրօշիւրով, որ ինքը նոյն իսկ ասելի լաւ է համաբերում որ Ռուսաստանը իր հովանաւորութիւնը տարածէ Փոքր Ասիայի վրա, միայն թէ չը շարունակվի խմբական ազատութիւնների արիւնոտ ըէժիմը, ազատութիւններ, որոնց «Գարմիր Սուլթանը» կանոնաւոր, համարեա մեբեռնական սիստեմ է դարձրել: Գրաստօնեան զղրոցի ու Գրաստօնեան ուսանդութիւնների անգլիական քաղաքագէտները այսօր էլ կըբնում են թէ բաւարար լուծում տալ հայկական հարցին կարող է միայն Ռուսաստանը:

1896-ին Անգլիան փորձեց վերջ դնել սուլթանի մոլեգնութեան և հայերի ասունջնրներին: Բայց այս փորձը անաջողութեան հանդիպեց, ընդհարվելով Ռուսաստանի զրական մերժման հետ՝ իսկ Ռուսաստանի կամքը արձագանքի պէս կրկնում էր Ֆրանսիան իր միներաբ Հանոտոյի բերանով: Անգլիան ստաց թուլակամ Բուսլիայի հետ, որ անընդունակ էր լուրջ կերպով մասնակցութիւն ունենալու այն ճնշման մէջ, որ անհրաժեշտ էր գործ դնել Թիւրքական կառավարութեան վրա, մի կամայականութիւն, որ բերդի պատերի պէս շրջապատված էր մի քանի պետութիւնների հարբերոյ չէզոքութեամբ, միւսների բացարձակ հովանաւորութեամբ: Ատաջնորդութիւնը շատ վիրաւորեց Անգլիային և հայերին համակրող պրոգրեսիվ տարրերը Եւրոպայում: Այդ բօղից հայկական հարցը կարծես հանդարտ Մեծ Բրիտանական կղզիներում, իսկ Տրանսվալի պատերազմը բոլորովին ծածկեց նրան մոռացութեան խոտով: 1904 թէին, երբ Սասունի հայերը նորից հարկադրեցին աշխարհին խօսել այն նոր ջարդարարութիւնների մասին, որ նրանց համար պատրաստել էր Աբդուլ-Համիդի անողորմ կամքը, հայասէր Բենտինգը, «Contemporary Review»-ի խմբագիրը, անկիզօրէն խոստովանեց թէ դեռ երկու տարի առաջ նա ամենևին չէր հաւատայ, որ հայոց հարցը իրրև թէ կարող էր զարթ լոզալ այն իրը անդունդից, ուր ընկել էր նա:

(Կը շարունակվի)

մէջբերեց: Վիրաւորվածը ուղարկվեց Թիֆլիսի Մէթեյէլեան հիւանդանոցը:

—

Նոյեմբերի 15-ին երեկոյեան 6-ը մի ժամի սկզբին, 10-ը քաղաքամասի շրջանում, Մարէլիսկայա և Աւճալեան փողոցների անկիւնում, երկու անյայտ տեղացիներ ըէվոլվերի մի քանի հարուածներով վիրաւորեցին Բաթումի քաղաքային ոստիկանատան դեսատատար Զատիմիր Շեմիկինին, երբեք յետոյ չարագործները փախան Մարէլիսկայա ջուրացող դէպի երկաթուղու գիծը և անհետացան:

—

Քաղաքային բաժարանի բաղում, 5-ը քաղաքամասի շրջանում, պատաքնում գտնվեց իլիան տեսք մի նորածին դիակ, առանց բոնի մասնի նշանների: Դիակն ուղարկվեց Թիֆլիսի Մէթեյէլեան հիւանդանոցին կից Անատոմիական թատրոնը:

—

Նոյեմբերի լուս 15-ի գիշերը, 9-ը քաղաքամասի շրջանում, իշխանուհի Անատասիա Եվսէեվնա Զէլոխաեվի բնակարանից, որ գտնվում է Նիկոլաեվսկայա և Գիլդենօվսկայա փողոցների անկիւնում, պատշգամբի վրա գտնվող մեղուները կոտրելով, գողացել են 800 ր. զումարի զանազան ոսկեմակերեսիկներ: Կասկած է յայտնված Գօլու գաւառի Տիֆլիսվլ գեղի ընակիչ Սաֆլենո Կուլդաշանովի վրա, որը գողութիւնը կատարելուց յետոյ փախել է:

—

6-ը քաղաքամասի շրջանում, Սուլթանօվսկայա փողոցի վրա, գիներների և կանանոցների միջև ընկավեց և այդ կուի մէջ Թիֆլիսի քաղաքացի Օհանէս Զուրաբօվի ձախ աչք կորցրեց, իսկ Մէնդելեան գրեչատէրերի գնդի զինուոր Իլիան Շեվլիով գանալով վիրաւորեց փոքրիկ Սդոսախի գաւառի Կուրջանի գիւղի ընակիչ Գէորգի Ուսաքաշվիլիին: Վիրաւորները ուղարկվեցին Մէթեյէլեան հիւանդանոցը, իսկ յանցաւորը բռնվեց:

—

Նոյեմբերի 15-ին 4-ը քաղաքամասի ոստիկանութիւն եկաւ Քութայիսի նամանգի Բաձա գաւառի ընակիչ Գէորգի Սիրաձէ, որ ընակվում է Գաճօվսկայա փողոցի վրա, Թօրոսովի տանը և խոնարհաբար պատմեց ունի իշխան Բէգիթաբէգովի մօտ և յայտնեց, որ նոյեմբերի 12-ին իշխանի մօտ ապրելիս վարձվեց իրան անծանօթ մի կին, որ իրան Ալէքսանդրա Բէգիեա էր անանուն և երբեք մի ժամ միայուց յետոյ գնաց, ասելով, որ գնում է բերելու անցագիրը և այլ ևս չը վերադարձաւ: Նոյեմբերի 13-ին ինքն, Սիրաձէ, սուսգերով էր իրերը, տեսաւ, որ զողացել են իրանից 72 բուբլի փող, որ գտնվում էր չը փակված չէմոդանումն: Նա կասկած յայտն

մասն որ օտար մի պետութիւն, օրինակ Ռուսաստանը, ձեռք բերէ Պարսից Ծոցում նաւահանգիստներ կամ ածխային կայաններ, որովհետև դա չափազանց վտանգաւոր է Հնդկաստանի համար։ Ուրեմն այդ դէպքում կարևոր է համաձայնութիւնը Ռուսաստանի հետ։ Գալով Աւստրիայինին, ինքը Ռուսաստանը ճանաչել է, որ այդ երկիրը չէ մտնում իր ազդեցութեան շրջանի մէջ, ուստի այդ հարցը տարաձայնութիւններ յարուցանել չէ կարող։ Գալով Թիւրքիային, պէտք է ասել, որ Կ. Պոլիսը չէ կարող զիջիլ որ և է պետութեան, եթէ Ռուսաստանը գրաւէ, այն ժամանակ համաշխարհային պատերազմ կը ծագէ, որովհետև ոչ Գերմանիան, ոչ Աւստրիան թոյլ չեն տայ այդ մայրաքաղաքի անցնումը Ռուսաստանին։ Բայց Փոքր-Ասիայի գրաւման Ռուսաստանի ձեռքով Անգլիան գուցէ արդէքներ չը յարուցանէ, որովհետև գրանով նա հարուած կը հասցնէ Գերմանիային, որ արդէն սկսել է իր արևի թաթը դնել այդ երկրի վրայ։

Թիւրքիայ Վերջերս, ինչպէս հաղորդում են եւրոպական լրագիրները, Ռուսաստանի և Թիւրքիայի մէջ սկսել են լարված յարաբերութիւններ։ Ռուսաց արտաքին գործերի մինիստրութիւնը դիմել է Բ. Դուռն և բողոքել Բօսֆորի ափերի վրա ամրութիւններ կառուցանելու դէմ, որ պահանջելով քանդել այժմ այդ ամրութիւնները։ Իր բողոքը պատճառաբանում է նրանով, որ Թիւրքիան զուտ չէ վճարել իր պատերազմական տուգանքը, որ այժմ 650,000 ֆունտ ստերլինգ է։ Այդ պահանջը սաստիկ վատ ազդեցութիւն է գործել սուլթանի և Թիւրքիայի վրա։

Միւս կողմից Թիւրք մինիստրների մէջ գոյութիւն է ծագել։ Արտաքին գործերի մինիստրը Թէվֆիկ փաշան մեղադրվում է, որ նա չը կարողացաւ մեծ պետութիւններին Թիւրքիայի գործերին միջամտելու տալուն մասին, մանաւանդ որ Գերմանիան բարկված լինելով, կարգի էր նրա միջոցով ազդել ուրիշ պետութիւնների վրա։ Թէվֆիկ փաշան հրաժարական տուաց, բայց տուլթանը չընդունեց։

Թուսնախ։ Սենատը վերջացրեց եկեղեցին Պետութիւնից բաժանելու օրինագծի ընդհանուր քննութիւնը։ Այդ քննութիւնը, անշուշտ, այնպիսի ընդհանուր հետաքրքրութիւն չը յարուցեց, ինչպէս պարտաւոր։ Ընդդիմադիր կուսակցութիւնն ներկայացուցիչները ասացուցանում էին, թէ օրինագիծը ուղղված է ոչ թէ կաթոլիկ եկեղեցու վերացման դէմ, այլ առնառաքել եկեղեցու վերացման դեմ, և պահանջում էին պահպանել Կոնկորդատը։ Լուսաւորութեան մինիստր Բրիէնդիան Մարքեն պաշտպանեց օրինագիծը, ասացուցանելով, որ կառավարութիւնը ստիպված էր դիմել եկեղեցական բէնֆիցին, ի նկատի ունենալով, որ պապական ամբոխ յայտնիս խոխոտում էր կոնկորդատը։ Եկեղեցու բաժանումը պետութիւնից անհրաժեշտ է։ Նա կը տայ եկեղեցուն ազատութիւն, իսկ պետութեան՝ վերահսկողութիւն։ Կառավարութիւնը համոզված է, որ երկիրը պահանջում է այդ բէնֆիցը, ոչ թէ երկիրը չունի ոչ մի անկախութիւններից։ Իր հաւի վերջում մինիստրը դրեց վստահութեան հարց։ Դրանից յետոյ սենատը 195 ձայների մեծամասնութեամբ ընդդէմ 976-ի որոշեց դիմել օրինագծի քննութեան առանձին յօդուածներով։

Աւստրո-Ունգարիա։ Մենք յայտնեցինք արդէն, որ մինիստր-նախագահ Դաուէը մշակել է ընտրական բէնֆիցի ծրագիրը, որ պէտք է սաստկացնէ բէնֆիցատուն դեկտեմբերին։ Բաւական էութիւնն, Դաուէ առաջարկում է ընդհանուր, հաւասար և ուղղակի ընտրողական իրաւունք։ Այդ պրինցիպներին արդէն կայսրը հաւանութիւն է տուել։ Ցայսմ իրաւունք ունի նա, ով մի տարի ապրել է երկրում։ Այդ ծրագրի դէմ են կաթոլիկները և հակասեմիականները։

Հունաստան Աբեհիքամ։ Եապօնական կառավարութիւնը մի քանի պահանջներ արած լինելով Կորէայից, Օգիսից հաղորդում են, որ կորէական կառավարութիւնը զինչ բոլոր այդ պահանջներին։ Կայացած համաձայնութեան գլխաւոր կէտերը նրանք են, որ Կորէայի դիւանագիտական գործերի վարչաւորութիւնը կամ արտաքին գործերի մինիստրութիւնը փոխադրվում է Տօկիո, իսկ Սէուլում, այն է Կորէայի մայրաքաղաքում հաստատվում է եապօնական ընդհանուր-նահանգապետի պաշտօն, բացի դրանից, Կորէայի զանազան ռազմական եապոնական դիրքերում տրվելու են եապօնական պահակազօրքեր։ Այս դաշնագիրը արդէն ստորագրված է և դրանով, անշուշտ, Կորէան դառնում է Եապօնական վասալ մի պետութիւն։

ՊԵՏՐՈՍ ԱԶԻԶՅԱՆ

(Խորէն Սարգսեան)

Ահա երիտասարդ մէն ալ՝ իր ծաղիկ հասակին, իր կեանքի ամենէն ուռճալից փթթումին մէջ որ կախաղան կը բարձրանայ։

Մեր ասնջանքները մնացած չեն և մնալիք ալ չմնան, դրան. միշտ հոգեկան նոր կսկիծներ, նոր ալեկոծութիւններ. արիւնի ծովը չի հանգարտիր և անոնք որ կը լողան իր մէջ դատապարտած են նաւահանգիստ չի հասնելու, կարծես, որովհետև անիկա լեցուն է խութերով ու խարակներով, որոնց մէջէն փրկութեան միւնոյնը իզուր կը ջանան ճեղքել, համբոյ բանալ հայուն՝ դէպի խաղաղութեան, բարօրութեան պաշտելի ափունքը։ Ի զուր կրպտանք Ազատութեան Աստուածին, որ իջնէ այդ կարմիր-ծովին մէջ ու պատաւէ դայն, անոնք բանայ գերութեան պարտասած ժողովուրդին։ Ծովը շատ խոր է ու արեան ալիքները հզօր, կատաղի. առագաստները կը մեռնին, կարմիր լոյսը կը զողզողի հեատերութիւններու վրայ և ահա փոթորիկը կը փչէ, կը խորտակեն կայմերը, կը մարի ճրագը և սակայն նորէն, նորէն կը մեռնին յանդուգն նաւաստիները լիառատաստ։

Այսպէս, կը մարի նաև Պետրոս Ազիզօֆի ճրագը։

Դեռ կանուխ տղայ հասակէն, երբ փոքր ուռանող մէն էր իր ծնողավարին՝ Մանասայի մէջ, զոհաբերութեան ընդարը ճակատագրական զարթնում մը կանենար իր մանկական հոգւոյն մէջ եւ կը զանազանէր զինքը իր ընկերակիցներէն. հասած տեղը, պատերուն, զոներուն վրայ՝

«Մենանչն տեղ մանը մի է,
Մարդ մի անգամ կը մեռնի,»

կը գրէր յամառօրէն, սոսրելով խրոխտալից ու արհամարհանքով նայելու դէպի մանը։ Բնականաբար իր այդ անհնազանդ, դժգոհ ու ըմբոստ հոգին պիտի չի կրնար շունչ առնել մի՛ջավայրի մը մէջ, որ շատ հեռու էր Հայրենիքէն ու անոր ցաւերու սահմաններէն։ Տանը-ութը տարեկան հասակին մէջ Իզմիր կը մեկնի իր ծնողավայրէն՝ ուր անգամ մը ևս չի պիտի վերադառնար։ Բաղձանքն էր անոնցմէ արատաւորման, որպէս զի զրօնն կեանքի մը մէջ մտնէ։ Հոն չորս տարի անձկալից, մտաահեւ ու բռնեմական վիճակ մը կոնենայ։ Դրամն ու միջոցները են որ կը պակասին իրեն։ Եւ ահա տոմիթը կը ներկայանայ։ Նաւը պատրաստ է գինքը փոխադրելու, բայց դրամը միշտ կը պակասէ։ Կը սոսկանի իր նորը շինել տուած ձեռք մը հագուստը մէկ մէկ ծախել ու ծպտած ածխագործի ցեղատեսերով հեռանալ։ Կը հասնի Ամէնը ու հնադարձանքներով կը նեռէ ինքզինքը Եդիպտոս։ Սակայն Պետրոսը չէր կրնար ապրիլ անտարտարտային այդ Ջաստոյ մեղմ արեւին տակ. աչքերը հեռուն, ուրիշ հորիզոններու սեւեռած էին։

Կանգնի վերջապէս կովկաս, ուր կռուող շարքերուն մէջ կը բռնէ իր տեղը։ Կը մասնակցի դիմակիր խումբերու, կռնեկրաս և խոստուրի կռիւին, ուր ծանրապէս վիրաւոր կ'իյնայ։ Ընկերները հանդիսկերով իրեն՝ իբենց նահանջի միջոցին, կարձելով թէ այլեւս անհնար էր փրկել զինքը, կ'որոշեն փոխադրել իր օրհասը և չի ձգել որ ենթարկուի թշնամիին խժդժութեանց։ Սակայն, ինք որքան ալ ուշաթափ ու թաղացած, տակաւին կը պահէր իր մաքին ու լսողութեան ազատ գիտակցութիւնը, կը լսէ երգի պէս՝ ինչ որ կը խօսին իր ընկերները ու ինչ որ կը վճռեն։ Անոնց հրացանը կ'որոտայ, ու կ'իմանայ ընկերաջնջիչը՝ որ կրսէ՝ «պրծա՛ւ»։ Գիշերը վրայ կը հասնի և զուարթութիւնը կը կապուրէ, կ'ուշաբերէ զինքը։ Վեր կը կենայ իր ինկած տեղէն, կը ճշտէ իր գիրքը և բարեդարձաբար նախապէս գիտակ ըլլալով իր ընկերներուն նոյն օրուան հանելիք կայանը՝ կը թաքէ ու կը գտնէ զանոնք։ Անկարելի է բացատրել ընկերներուն զարմանքն և ուրախութիւնը, որովհետև Ազիզեանը եղած է միշտ ամենէն անձնուէր, ամենէն ազնիւ հոգին՝ իր զինակիցներուն եւ բոլոր իր ծանօթներուն համար։ Կովկասի մէջ շատ մը պատահարութիւններէ զատ՝ հարատաեւութեամբ ու անբաղդաւորի պտտարիւնութեամբ կատարեր է Թուքք հարատաեւորէ ալէկի մը ակբրը, որուն մասը վրդարար եղած է բազմաթիւ հայ գիւղերու։

Վերջին պարտականութիւնը 1902-ին Իզմիրի մէջ կատարեց, հանելով Կովկասէն, բայց այս անգամ բաղդը քէն ըրաւ, երեսը դարձուց և Ազիզօֆ դատապարտեցաւ մահուան պատժի։

Երեք տարի սպասեց բանտին մէջ, երեք լոյսի, վճռաւորեան ու մահուան ապասամի անուտը տարիներ. բայց մեաց նոյն հոգեթաղ, բարեդարձու ու Ազատութեան անձնուէր, հաւատարիմ գիւղը։ Իր եռեկ կը Թեղու անբարիր ու բերդուն հերոսական վիճակի մը անմոռանալի յիշատակը։ Անա ինչ որ կը գրէ մեզի մեր Իզմիրի թղթակիցը իր կախաղանի պարագաներուն մասնաւորութիւնները մասին։

«Պատերազմներու պատուն Պետրոսը զուշած էր թէ զուրսի տակաւորագրութիւնները վերջը իր կախաղան բարձրանալուն պատճառ պիտի ըլլան. այսպէս բան էր բանտին մէջ և այնպէս ալ եղաւ։ Օգոստոս 8-ի կիրակի իրիկունը Պետրոսը գնանը դրին և յաջորդ օրը՝ երկուշաբթի առաւօտուն, ժամը չորս ու կէսին գնանէն հանելով, ձեռքերը կապեցին և 100-ի չափ ոստիկան զինուորներ, 50 փօլիսներ ու գոմիսէրներ շրջապատուած՝ առաջնորդեցին Ալիքսաշ մէկտան կոչուած հրապարակը։ Հոն առաջի իրիկունը արդէն կախաղանը պատրաստված էր։ Երբ սէ թափորը կախաղանին տակ հասաւ, ուղեկից ոստիկանները քանի մը քայլ ետ քաշուելով շրջանակ մը կազմեցին. այդ միջոցին Տէր Սաղոմոն քահանան մօտենալով Պետրոսին՝ խոստովանացուց և հաղորդեց։ Պետրոսը քահանային յանձնեց 10 ոսկի, ինը հատը Մանիսա իր մօրկանը իրեղու, իսկ մէկ հատովն ալ իր թաղման ծախքերը հոգալու։ Քահանան խոստացաւ և հեռացաւ։ Այն ատեն Պետրոս բարձրաձայն բան մը ընելը շրջապատողներուն՝

—Ասելիք ժամս է։

Ասաւ նայինը, պատասխանեցին քանի մը գոմիսէրներ։

Պետրոսը՝ կատարեալ պարարիւնութեամբ ու վճռանձնութեամբ սկսաւ խօսիլ.

—Ես ուսանողական չեմ և ոչ ալ անունս Ազիզօֆ է. ես բնիկ Մանիսացի եմ, 16 տարեկան հասակիս Յեղափոխութեան գնացէ և զրոնցի Հայրենիքիս ազատութեանը համար աշխատելի մինչև կախաղան. այս դատապարտ ծնողավարքս մեկնեցայ, գնացի Եգիպտոս, Ռուսաստան, այլեայլ տեղեր, ու շատ ծառայութիւններ կատարեցի Հայրենիքիս փրկութեանը համար։

Կանգ առաւ և ահա բանտին տնօրէնը պոռաց՝

—Մ՛ լ քեզ լսելու ժամանակ չունենք, կախեցէք։

Պետրոս՝ յաղագեցաւ այս նախատինքէն, իր արի հոգին նորէն թեւարեցաւ ու թափահարեց. կախաղանին առջև իսկ չէր կրնար ընդունիլ այդ արհամարհանքը, ուստի նախատինքին պատասխանեց՝ կատաղի խօսքերով։

Առաջնորդ չորս ոստիկան զինուորներ չուանին օղակը վիզը անցուցին և ժամ մը օրէն ճախարակէն վեր բաշեցին. 7 վայրկեան տանջուեցաւ և յետոյ իր մարմինը թուլցած, հանգիստացաւ չուանին ոլորումին ու տատանումին, քայց դեռ ատեն ատեն կը շարժէր ու թեթեւ ջղաձգութիւններ կրնենայ։

Այդ օրը՝ քաղաքն ամբողջ շփոթութեան ու զարմանքի մէջ էր և ամէն կողմէ դեպի Ալիքսաշ մէյտանը կը դիմեին կախուողը տեսնելու. ես ալ գացի և կախաղանին դիմացը կանգ առի նախ յուզուեցայ, աչքերս արցունքով լեցուեցան, քայց յետոյ չեմ կրնար զայն զիտելէ. պարանի հերոսը դէմքը դեպի երկինք ցցած, կարծես տակաւին վրէժխնդրութեան նշան մը կընէր ու այդ նշանը եկաւ իմ հոգւոյս ալ հարաւ...»

Վրէժխնդրութիւնը, այո, Պետրոսին յետին վրէժխնդրութիւնը՝ ազգաբար խորհրդանշանն է, որ մահուան անդին, յաւիտենականութեան սեմէն մեզ ամենուս բարև կը խրկէ մեր թանկագին ընկերը. ինչպէս մոռնանք այդ նուիրական կապը։

Հարը անգամ օրհնեալ թող ըլլայ իր մայր գերեզմանը։

«Ազդմիկ»

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

Պօստ-հեռագրական պաշտօնեաների գործադուլի պատճառով գործակալական հեռագիրներ չեն ստացված Թիֆլիսում։

Խմբագիր-Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱԶԱՄԱԼԵԱՆ

ՑԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺԻՇԿԱՊԵՏ Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Դուվիա, Վօրոնցօվի արքանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից՝
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ
Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութիւն, վեներական (սիֆիլիս) և միզասեռ. հ.
ՁԻԿՕՎԱՆԻ—9—10 ժ. աչքի. ներքին և նեարդային
Զ. Ի. ԱԽԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներական և վիրաբուժութիւն։
Զ. Ի. ԲԱՐԱՆԱՍԵԱՆ—10—11 ժ. մանկաբարձութիւն, կանանց և երեխայոց հ.
Կ. Ի. ԳԶԵԼԻԵՎ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի
Ա. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.
ԳՐԵ-ԲԺԻՇԿ ՇԶԻՐԻՆԻՆԱ—1½-2 ժ. ներկաբարձութիւն և կանանց հ.
Գ. Յ. ԳՈՒՐԳԵՆՕՎ—1—2 ժ. կանանց հ. և մանկաբարձութիւն։
ԵՐԵԿՈՆՕՐԸ
Ա. Մ. ՓՈՂԱՆՕՎ—5—6 ժ. ներքին և երեխայոց հ. և ծաղկաւոր։
Ա. Դ. ԱՐԵԼԱՆ—6—7 ժ. ներքին հիւանդ.
Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—7—7½ ժ.
Գ. Ա. ԱՐԻԱՆԻՆԱ. հանդիսում է միկրոբիոլոգիան և բակտերիոլոգիական հետազօտութիւններ։
Վճարը 50 կ. լաբորատորիան ներ։ Հանձնարարվում է բոլոր վիրաբուժի և օգնականների համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ
բժշկապետ Բ. Նաւասարդեան

ՀԻԱՆԴԱՆՈՑ
ԲԺԻՇԿՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
մշտական ժամանակներով։
Եկեղեցական փողոց, 101, տելեֆոն 1026.
Հիւանդների ընդունելութիւն ամեն օր։
Մ. Գ. ԱՂԱՋԱՆԵԱՆՑ 11—12 ժ.—միզասեռական, կաշու և սիֆիլիս։
Ի. Ն. ԵՂԻԱԶԱՐԵԱՆՑ 11—12 ժ.—ներքին հ. և ելեզարաբուժութիւն։
Գ. Ն. ԴԷՄԻՏՕՎ—11—12 կ. կանանց հ. և մանկաբարձութիւն։
Ի. Ե. ԱԽԵՏԻՍԵԱՆՑ 12—1 ժ. կանանց հ. և մանկաբարձութիւն։
Գ. Հ. ԹԱԴԷՈՍԵԱՆ 12—1 ժ. ներքին և երեխայոց հ.
Մ. Գ. ԴԷՄՕՎՆ. 1—2 ժ. վիրաբուժական հ.
Մ. Մ. ԷԼՉԻԵԱՆ 1—2 ժ. քթի, կոկորդի և ականջի հ.
Գ. Ա. ԲԵՅԼԻ—երեխայոց և ներքին հ.
Հիւանդանոցում բժշկում են հիպնոզով, կատարվում են բիոլոգիական, բակտերիոլոգիական և քիմիական հետազօտութիւններ։ Ներկայս և ծաղիկաւորութիւն և սանսուսեբէ (кормлица) ընդունելութիւն։ Բժշկական խորհրդի համար վճարը 50 կոպ.։ Օպերացիայի և համախորհրդի վճարը ըստ համաձայնութեան։ Գիշերային հիւանդների բաժանմունքը բաղկացած է ընդհանուր սենեակներից և առանձին նոմերներից։
(Հ. ու. կ.) 18—100

ԲԺԻՇԿ
Բ. Ա. ՊԱՊՈՎԵԱՆ
Մասնագէտ—քթի, կոկորդի և ականջի։ Ընդունում է հիւանդներին—առաւ. 10—12½ ժ. երեկ. 5—7 ժ.
Հայոցէն. Մի՛քայէլեան փողոց ու. Ֆօրբերի № 157. 5—10

ԷԼԵԿՏՐՕ-ԲՈՒԺԱԳԱՆ ԿԱԲԻՆԷՏ
ԲԺԻՇԿ Միխայել Գեղեվանովի
Զրպային հիւանդների ընդունելութիւնը
Առաւօտեան ժամի 12-ից մինչև 1-ը
Երեկոյեան ժամի 6-ից—7-ը
Կօրգանովսկայա փող. № 20 Վերայում։ Սեփական տ., տելեֆոն № 791։ (ա. օ.) 32—150

ԲԺՇԿԱՊԵՏ
Տ. ԳԷՈՐԳ-ԲԷԳԵԱՆ
ԱԶՔԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
Ընդունելութիւն ամեն օր
Առաւօտեան ժամի 9-ից մինչև 12
Երեկոյեան » 5-ից մինչև 7
Վեկամինսկայա փողոց № 8։ (ե.ո.)23—100

ԲԺԻՇ
Ա. ՄԻՐԶՈՅԵԱՆ
Մասնագէտ Աչքի հիւանդութիւնների, վիրակոց հիւանդների ընդունելութիւնը։ Առաւօտեան 1—3 ժամը. Երեկոյեան 5—6 ժամը։ Սօլօվակայա փող. տեփ. տ.։ 24—25

ԲԺՇԿԱՊԵՏ
Բ. ՂԱՍԱՍԱՐԴԵԱՆ
Վերադարձա և սանձնելով իր «ԱՌԱՋԻՆ Մ. ՀԻՒԱՆԴԱՆՈՑԸ», վերսկսեց բժշկական գործունէութիւնը։ 24—100

ԲԺ. Ա. ՄԻԼԻԹԱՐԵԱՆ
Ընդունում է մանաւորապէս սիֆիլիսի, միզային, վեներական և մորթու սխալ ունեցող հիւանդներին ամենայն օր առաւ. 12—2 ժ. և 6—8 երեկ. Սօլօվակ, անկիւն Բերուսօվսկի և Պասկեվիչա փողոց. № 33/15 տ. Մի՛քիմանեանի (նախկին օրիորդաց 3-դ գիմնազ. տուն)։
(ա. օ.) 20—100

ԲԺՇԿ
Լեւոն Օհանջանեան
Մասնագէտ միզային, վեներական, սիֆիլիսի և կաշու հիւանդութիւններին։ Ընդունում է առաւօտեան 9-ից մինչև 11 ժամը, երեկոյեան 6—9 ժամ։ Կանանց և երեխաների համար 11—12 ժ.։ Հայոցէն անկիւն Գօլովինսկի պրոսպեկտ և Կարետնայա փողոցի, տուն Թամամշեանի։ Մուտքը Կարետնայի փողոցից № 2։
(ա. օ.) 56—300

ԹԻՖԼԻՍԻ ԱՐՔԱՅԱԿԱՆ ԹԱՏՐՕՆ
Այսօր, ուրբաթ, նոյեմբերի 18-ին
ՀՈՐԲՈՐԴ ԱՆԴԱՄ
կը ներկայացվի
«Զ Ա Զ Ա»
Օպերա 4 գործ. երաժ. Լէոնկիվալլօի։
Մասնակցում են տ.տ. Դուբրովսկայա, Նեվիտսկայա, Միչիկայաս, Զասլավսկայա, Կարպովա, պ.պ. Պրեսման, Կարելին, Կոլոսով, Սսկոլսկիյ, Տամամշեվիչ, Զիատակով, Վօլսկիյ, Դեմանտենկո, Շէյն, Սուրդին։
Պարերը կը դնէ բալէտմէյստր պ. Բեկեֆի
Զինուորական երաժշտութիւն Սապօրնի բատալիոնի ռ. Ռիչչիի դեկավարութեամբ։
Սկիզբը երեկոյեան ժամը 8-ին։
Տեղերի գները սովորական են։
Անօնս. Շաբաթ, նոյեմբերի 19-ին, կը ներկայացվի «Գալա» ներկայացում 1-ին անգամ։ «ԶԵՐԵՎԻՉԿԻ» օպերա Զայկովսկու։
Կիրակի, նոյեմբերի 20-ին կը կայանայ «Ներքոն», երաժ. Բարիշնայի։
Պատրաստում են ներկայացնելու «Եգիպտոսի հարսանիքը», ժրաժ. Մօցարտի։

ՄԻ ԽՈՒՄԲ ՈՒՍԱՆՈՂՆԵՐ ՀՐԱՒԻՐՈՒՄ ԵՆ ԸՆԿԵՐ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ ԵՒ ուսանողուհիներ ընդհանուր ժողովի, որ պիտի տեղի ունենայ շաբաթ օրը, ամսոյս 19-ին, ժամը 4½-ին, Դուքմայի զանվեհնում՝ ժամանակակից և էական հարցեր քննելու համար։

ՌԻԺ. Մ. ԶԱԼԵՍԿԻ
Ընդունում է ներքին հիւանդութիւններով Գանձակում, Գօնդրակօվսկայա փողոց, տուն Զախարովի, № 22. 2—5

Հարկաւոր է մի ուսուցիչ Նաթալուի ծիսական ուսումնարանի համար. անհրաժեշտ է վրացերէն լեզու խմանալ (խօսակցութիւնը). պայմանների համար դիմել Մի՛քայէլեան փողոց № 154. բժ. Տէր-Գրիգորեանցին։ (ու.կ.) 1—2

Մի տիկին ցանկանում է պարապել երեխաների հետ Ցանձն է, ուսուցչուհի կարել ապրանակներ և զգեստներ։ Հայցէ՝ Նիկոլայևսկի փող. տուն Կարաչևի № 26. Շ. Դ—ին։ 1—2

ԱԴԱԶՈՒՄ ԵՄ
խնամողներին
Գօրիսկայի Խաչատուր Դաւանցի անդը, որը մի քանի ամիս առաջ անյայտացել է Սեբաստիա 30 տարեկան. իմացողներին խնդրում եմ յայտնել ինձ. Անդրէասեան, բաւիկա վագզալի. Գալուստ Դաւանց 5—6

Դատաստանդիութեան մէջ փորձված
Ռասանոր տալիս է դասեր բոլոր միջատարիներից։ Նոյն տեղում ապրող դերմանացի ընդունում է դասեր նոր լեզուներից։ Михайловскій просп. д. № 32, студ. А. А.
(Հ. ու. կ.) 2—5

Աժան և մատչելի գներով ծախվում են զանազան տեսակի
ԳՈՐԳԵՐ
Михайловская ул. д. № 32. (Հ.ու.կ) —5

Ղրաբայի հայոց գպրոցի համար հարիւր է աւելացրել Ռուսաստանի, որտեղ վայելչագրութեան և թուաբանութեան ուսուցիչ։ Շաբաթական 24 դասս։ Տարեկան 450 բաւական ռոճիկ, հաշուելով ուսուցչի Դուրա ժամանելու ծախքը։ Ընտրեցեալ, ծանուց, վարձատրեալ, և լուսաւորութիւն։ Դիմել՝ Куба, редактору Аветису Мартиросянцу. 2—4

ՌԻԺ. Ն. ԵԱՐԱՄԻՇԵԱՆ
Ներքին, մանուկների, կաշու և վեներական հիւանդութիւնների համար։
Ընդունում է ամեն օր առաւօտեան 9—12 ժ.
երեկոյեան 5—7 ժ.
ասցէ—Արասարգեան հրապարակ № 9, մուտքը Շելեպուխինեան փողոցից № 1։
(Եր.հ.կ.) 7—20

ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
„ՍՏ. ԼԻՍԻՑԵԱՆ ԵՒ ԸՆԿ.“
Նոր հրատարակութիւններ
Զօմբարա, Ինչու այժմ ամեն մարդ հեռաքերվում է քարտաբանական և ընկերավարչական խնդիրներով, 10 կ.։
Ախէլիս, Իրաւունքի ծագումն և պատմութիւնը, 10 կ.։
Գաուլիէ, Կապիտալ և կապիտալիզմ, 12 դ
Երեք զրոյցներն էլ—Ս. Թադեւոսեանի թարգմանութեամբ։
Դիմել դրավաճառներին։ Պահեստը. Թիֆլիս, Բեհրութեան փ. 25. 3—3

Լոյս տեսաւ
Յարութիւն Սարգսեանի
«ՍԻՐՈՑ ՅԱՐՈՒԹԻՒՆ»
Պատկեր. գինը 10 կոպեկ
Դիմել հեղինակին — Թիֆլիս, Հաւլաբար. Լազարեւսկայա 49։ Գրաշրջիկներին զուտարով գնելիս՝ 40% զեղչ։ Ճանապարհածախսը իրանց վրա։ Սրժէքն ուղարկել կանխիկ։ 3—3

ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ
Թիֆլիսի Հրատարակչական ընկերութեան հրատարակած հետեւեալ գրքոյկները։
Զուտարով գնողներին 30% զեղչ։ Ճանապարհածախսը նրանց հաշուին։
Դիմել՝ Въ Тифлисѣ. Въ Правленіе Тифлисскаго Издат. Т-ва на Вельяминовской ул. 22, кв. 5. (Կ. Ե.) 2—2

Մի ինտելիգենտ հայ ընտանիքում տրվում են
ԵՐԿՈՒ ՍԵՆԵԱԿ
առանձին մուտքով մի կամ երկու հոգու։
Նոյն տեղ ընդունվում է և մի աշակերտ ամբողջ պանսիոնով։ Դիմել՝ угол Жуковскаго „Гудовича д. № 15 (со стороны Жуковскаго.)
3—3

ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Ժամերը հաշուած են Պետերբուրգի ժամանակով։ իսկ փոխադրերի մինչեւ Թիֆլիսի ժամանակով)։

	Պօստային	Մարգասաւ.	Արագ.	Ապրանք.
Բաքուից դուրս գալը	4 ժ. 53 ր. ցերեկ.	11 ժ. 03 ր. ցերեկ.	12 ժ. 20 ր. գիշ.	4 ժ. 03 ր. գիշ.
Թիֆլիս հասնելը	11 » 10 » »	5 ժ. 31 ր. առաւ.	1 ժ. 30 ր. ցերեկ.	9 ժ. 30 ր. գիշ.
Թիֆլիսից դուրս գալը	11 » 55 » »	6 ժ. 07 ր. առաւ.	—	—
(Թիֆլիսի ժամանակով)	12 » 53 » »	7 ժ. 05 ր. առաւ.	—	—
Բաքում հասնելը	1 » 14 ր. գիշ.	7 ժ. 07 ր. եր.	—	—
Բաքուից դուրս գալը	5 » 15 » »	5 ժ. 24 ր. ցերեկ.	—	—
Թիֆլիս հասնելը	6 » 11 ր. եր.	6 ժ. 44 ր. առաւ.	—	—
Թիֆլիսից դուրս գալը	6 » 58 » »	7 ժ. 48 ր. առաւ.	5 ժ. 35 ր. ցերեկ.	10 ժ. 40 ր. գիշ.
(Թիֆլիսի ժամանակով)	7 » 56 » »	8 ժ. 46 ր. առաւ.	6 ժ. 33 ր. ցերեկ.	11 ժ. 38 ր. գիշ.
Բաքու հասնելը	1 » 20 ր. ցերեկ.	12 ժ. 42 ր. գիշ.	6 ժ. 10 ր. առաւ.	3 ժ. 55 ր. ցերեկ.
Երևանից դուրս գալը	12 » 02 » »	—	—	11 ժ. 26 ր. գիշ.
Կարսից » »	3 » 57 » »	—	—	3 ժ. 18 ր. գիշ.
Ալեքսանդրօպոլից դուրս գալը	7 » 38 ր. եր.	—	—	7 ժ. 06 ր. առաւ.
Թիֆլիս հասնելը	5 » 10 » առաւ.	—	—	4 ժ. 48 ր. ցերեկ.
Թիֆլիսից դուրս գալը	11 » 22 » գիշ.	—	—	1 ժ. 13 ր. ցերեկ.
(Թիֆլիսի ժամանակով)	12 » 20 » »	—	—	2 ժ. 11 ր. ցերեկ.
Ալեքսանդրօպոլից դուրս գալը	10 » 15 » առաւ.	—	—	12 ժ. 50 ր. գիշ.
Կարս հասնելը	1 » 55 » ցերեկ.	—	—	4 ժ. 24 ր. գիշ.
Երևան հասնելը	4 » 21 » »	—	—	6 ժ. 48 ր. առաւ.

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
1906 թ.
„ԱՇԽԱՏԱՆՔ“
ԹՈՂՄՊԴՐՈՒԵՆ, ՏՈՆԵՍՈՒԵՆ, ԳԻՒՂԱՅԻՆ
ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ
ՈՐ ԴՈՒՐՍ Է ԳԱԼՈՒ ԱՌԱՋԻԿԱՑ 1906 թ. ՅՈՒՆՎԱՐԻ ՄԷԿԻՑ
Ծրագիր՝ 1) Առաջնորդող յօդուածներ քաղաքականական ժամանակակից խնդիրների մասին. 2) Գիւղական կեանք և կարիքներ. 3) Գիւղական անտեսութիւն և տեխնիկա. 4) Զեմստվո և համայնք. 5) Գիւղական դպրոց, դասարան և ուսուցիչներ. 6) Գիւղական պրօլետարիատի շրջիկ. 7) Առողջապահութիւն և անասնաբուժութիւն. 8) Թղթակցութիւններ գաւառից. 9) Մատնի շրջիկ. 10) Գաղափարներ և գրոյցներ. 11) Հարցեր և պատասխաններ. 12) Շեակայ և տեղեկատու և 13) Յայտարարութիւններ։
«Աշխատանքը» նուիրված է լինելու հայ գիւղացիութեան և նրա մէջից դուրս եկած պրօլետարիատի շահերին և կարիքներին։
Գաւառի և գիւղի հետ սերտ և կենդանի յարաբերութիւններ հաստատելը «Աշխատանքի» ձգտումն է։
Ուսուցիչները, գիւղական քահանաները և գիւղական ինտելիգենցիան «Աշխատանքի» թղթակիցներն ու կենդանի ոյժերն են լինելու։
«Աշխատանքին» աշխատելու հրաւիրված են որոշ ուղղութեան մարդիկ։
«Աշխատանքը» վարձատրելու է իր բոլոր մշտական աշխատակիցներին և գաւառական թղթակիցներին։
ԲԱԺԱՆՈՐԴԱԳ